ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2026 թվականի N 672 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 175-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2-րդ հոդվածի 17.5-րդ մասը և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» N 175-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումները՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու և կապիտալ ծախսերի

առանձին տեսակների նկատմամբ կիրառելի լրացուցիչ պահանջները սահմանելու մասին».

2) որոշման նախաբանը «10-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը» բառերից հետո լրացնել «, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2-րդ հոդվածի 17.5-րդ մասը և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը» բառերով.

3) որոշումը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ կետով՝

«2. Սահմանել կապիտալ ծախսերի առանձին տեսակների նկատմամբ կիրառելի լրացուցիչ պահանջները՝ համաձայն N 2 հավելվածի:».

4) որոշումը լրացնել նոր՝ N 2 հավելվածով՝ համաձայն հավելվածի.

5) սահմանել, որ որոշման N 2 հավելվածով սահմանված պահանջները չեն տարածվում այն կապիտալ ծախսերի վրա, որոնք սույն հավելվածի ուժի մեջ մտնելու պահին մեկնարկել են (առկա է կնքված պայմանագիր, հայտարարված մրցույթ, այդ թվում՝ պայմանով), իսկ շինարարական աշխատանքների դեպքում առկա են դրական փորձագիտական եզրակացություն ունեցող նախագծանախահաշվային փաստաթղթերը կամ տեղակապման նախագծման աշխատանքների կատարումը նախատեսող կապալառուի հետ կնքված գնման պայմանագիր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

15.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ